«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**07.11.2025թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**ԲԿՄԱ**
Առաջնություն՝	**Հայաստանի Գավաթի Խաղարկություն**
Խաղ՝	**«Անդրանիկ» - «ԲԿՄԱ», 29.10.2025թ.**
Վարույթ՝	**ՀԳԽ-009**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՀԳԽ-009 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 2025 թվականի նոյեմբերի 6-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2025թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Գրասենյակի ղեկավար՝ Գայանե Զաքարյան

Ստորագրող

ՆԱՐԵԿ ԱԴԱՄՅԱՆ

3214900080

2025-11-07 13:41:16 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
ԲԿՄԱ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ bkmayerevan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06.11.2025թ.

Զեկուցող (անդամ)	Նարեկ Ադամյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝ ՀԳԽ-009

Խախտում՝

1. «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արշակ Պետրոսյանի (30784) կողմից բռնարարքը մրցակցի նկատմամբ (Հավելված 1 Բ, 15-րդ կետ)
2. «ԲԿՄԱ» թիմի գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցի (1031) կողմից մրցավարի կայացրած որոշման նկատմամբ անհամաձայնություն հայտնելով խաղադաշտ ներխուժելը (Հավելված 1 Ա, 17-րդ կետ)

Առաջնություն՝ Հայաստանի Գավաթի Խաղարկություն

Խաղ՝ «Անդրանիկ» - «ԲԿՄԱ», 29.10.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Արշակ Պետրոսյանին (30784) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր առաջնությունների վրա 2025 թվականի հոկտեմբերի 29-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): ԲԿՄԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի գլխավոր մարզիչ Արմեն Գյուլբուդաղյանցին (1031) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր առաջնությունների վրա 2025 թվականի հոկտեմբերի 29-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված

խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։ ԲԿՄԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստի նախագահող՝

Նարեկ Ադամյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։